# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773*, www.court.am


№ ԴԴ-3-Ե-5667

« 31 » հուլիսի 2023թ.

«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Ա. ԲԱԼԴՐՅԱՆԻՆ
«ԷՅԷՄԷՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար պատճենահանման մեքենաների, գունավոր տպիչների և ցանցային երթուղագծիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

**«Յունիքոմփ» ՓԲԸ**

- 1-ին չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝
  - բացակայում է առանց չիպի քարտրիջի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը,
  - հստակեցված չէ տոներ քարտրիջի ռեսուրսը, նշված է. «ներառված տոների ռեսուրսը՝ 6,000 էջ, հիմնական տոների ռեսուրսը՝ 12,500 էջ», մինչդեռ հրավերով սահմանված է. «տոներ քարթրիջի ռեսուրսը՝ առնվազն 10000 էջ»,
- 4-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝
  - նշված է. «յուրաքանչյուր քարթրիջի ռեսուրսը՝ 1250 էջ», մինչդեռ հրավերով սահմանված է. «յուրաքանչյուր քարթրիջի ռեսուրսը՝ առնվազն 1300 էջ»:

**ԷՅԷՄԷՍ ՍՊԸ**

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «մասնակցի ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված է մասնակցի հայերեն անվանումը, այնինչ՝ անհրաժեշտ է նշել մասնակցի ռուսերեն անվանումը,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 1-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվությունը. անհրաժեշտ է «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերը փոխարինել «1) ԷՅԷՄԷՍ ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով

ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ԷՅԷՄԷՍ ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերով,

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (Հավելված N 1.3) նշված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով հնարավոր չէ տեսնել ԷՅԷՄԷՍ ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները,

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **օգոստոսի 1-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

*Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան*
*Հեռ.՝ /+37410/ 511-774*